1. Հասարակական տրանսպորտի աշխատանքը ավելի արդյունավետ կազմակերպելու համար Երևանում մշվակվել էր հասարակական տրանսպորտի համար առանձնացված ավտոբուսային գծերի մեկ ամբողջական երթուղի, որը մասնակիորեն իրագործվել էր: Այն սկիզբ է առնում Նոր Նորք վարչական շրջանում և պետք է հասնի մինչև Մալաթիա Սեբաստիա վարչական շրջան:

2. Նշված ավտոբուսային առանձնացված գծի ընդլայնման համար Իլ Դե Ֆրանսի (Ֆրանսիա) գործընկերների հետ համատեղ մշակվել է Երևանի փոքր կետնտրոնի համար շարժունակության հայեցակարգ, որը, բացի առանձնացված ավտոբուսային գծերի ավելացումից, ներառում է նաև մի շարք փողոցներ, որոնցում երթևեկության կազմակերպման փոփոխությունների հետևանքով առաջարկվել է երթևեկության սահմանափակումներ՝ այդ փողոցները դարձնելով հետիոտնի համար նախատեսված հատվածներ: Պատկերում նշված հատվածներն առանձնացված են դեղին :

3. Նշված հատվածներից, որպես առաջին քայլ, առաջարկվել է Հանրապետության Հրապարակին հարող Աբովյան, Նալբանդյան և Արամի փողոցներում կիրառել նշված սահմանափակումները, որը պատկերում նշված է վարդագույն:

4. Առաջարկն իրագործելու շնորհիվ ակնկալվում է կիրառել երթևեկության սահմանափակումներ և տվյալ հատվածները սահմանել հետիոտնային: Նշված առաջարկվող փոփոխության նպատակն այն է, որ փոքր կենտրոնում կիրառվեն տրանսպորտային հոսքերի սահմանափակումներ և փոքր կետրոնը նախատեսված լինի հասարակական տրանսպորտի և հետիոտնի համար:

5. Բոլոր առաջարկների քննարկոիշումից հետո որոշում է կայացվել իրականցնել ավտոբուսային առանձնացված գծերի շարունակականության ապահովումը, ինչպես նաև երթևեկության փափախություններ մի շարք փողոցներում: Պատկերում ներկայացված են առաջիկա պլանավորված փոփոխությունների հետևանքով երթևեկության կազմակերպման նոր սխեմաները, որի նպատակն է հասարակական տրանսպոտն առանձնացնել ընդհանուր երթևեկությունից՝ ապահովելով արդյունավետության և սպասարկման որակի բարձրացում: Մասնավորապես.

Մաշտոցի պողոտայում, Ամիրյան փողոցի խաչմերուկի հարակից հատվածում կազմակերպված ընդհանուր օգտագործման տրանսպորտի կանգառի կետը կտեղափոխվի Դիանա Աբգարի անվան (նախկին «Մալիբուի») այգուն հարող ճանապարհահատված: Ավտոբուսային առանձնացված գիծը Մաշտոցի պողոտայում Կարեն Դեմիրճյան փողոցի խաչմերուկի հատվածից կտեղափոխվի 3-րդ երթևեկելի

գոտի, որպեսզի ապահովվի դրա շարունակությունը դեպի Խորենացու փողոց և հնարավորություն տա ավտոբուսին ձախ շրջադարձ կատարել: Խորենացու փողոցում կներդրվեն ավտոբուսային առանձնացված գծեր 2 ուղղություններով և կկիրառվի կայանման արգելք: Իտալիայի, Բեյրութի և Արգիշտիի փողոցներում ավտոբուսային առանձնացված գիծը կշարունակվի մինչև «Հաղթանակի» կամուրջ: Այս փոփոխությունների համատեքստում կիրականացվեն երթևեկության փոփոխություններ նաև Սուրբ Գրիգոր Լուսավորիչ փողոցում, որի հետևանքով Գր. Լուսավորիչ փողոց-Մաշտոցի պողոտա խաչմերուկում կավելացվի երթևեկելի գոտի, թույլատրելի ուղղությունը դեպի ձախ՝ «Հաղթանակի» կամուրջ ուղղությամբ, ինչի արդյունքում ձախ շրջադարձը նշված ճանապարհահատվածում կիրականացվի երկու երթևեկելի գոտուց:

6. Երթևեկության փոփոխություն է նախատեսվում նաև Սարյան և Մոսկովյան փողոցներում, որտեղ երթևեկությունը Սարյան փողոցում և Մոսկովյան փողոցի՝ Թումանյան փողոցի խաչմերուկից մինչև Բաղրամյան Պողոտայի խաչմերուկ հատվածում կկազմակերպվի միակողմ, ուղղությունը՝ Մաշտոցի պողոտայից դեպի Բաղրամյան պողոտա: Այդ փոփոխությունից հետո կպահպանվի փոխադրամիջոցների կայանումը նշված ճանապարհահատվածների երկու կողմերում: Այս փոփոխության շնորհից կնվազի Սարյան փողոցում խցանումների հավանականությունը: